Արձանագրություն N 2

ՋԿ-ՀՄԱԾՁԲ-20/3-Տ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 22 մայիսի 2020թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նազարյանը, Է. Մխիթարյանը և Գ. Հունանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հայտերի բացման մասին

Սահմանված ժամկետում www.armeps.am **կայքի միջոցով ՋԿ-ՀՄԱԾՁԲ-20/3-Տ ծածկագրով ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային հասցե, գործունեության հասցե և հեռախոսահամար
«Մելիորացիա» ՓԲԸ	ՀՀ Արարատի մարզ, գ.Հայանիստ, Էջմիածնի փ.22 melioracia00@mail.ru 099-565499

- **ՋԿ-ՀՄԱԾՁԲ-20/3-Տ** ծածկագրով մրցույթի հայտը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել է 2020 թվականի մայիսի 19-ին, ժամը 16:30-ին:
- Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

2. Մասնակցի (ներ) կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը

ՋԿ-ՀՄԱԾՁԲ-20/3-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից ընկերության կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը.

3. ՋԿ-ՀՄԱԾՁԲ-20/3-Տ ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

- Մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Մասնակցի (ների) առաջարկած գինը.

Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի վթարված հատվածի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում					
	Հազ. ՀՀ դրամ				
1	**ՉՓ 1** **Նախահաշվային արժեք – 854,3**				
	Ընկերություն	**Ինքնարժեք**	**Շահույթ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գին**
1	«Մելիորացիա» ՓԲԸ	720,0	67,2	157,44	944,64

5. Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ–ՀՄԱԾՁԲ-20/3-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը հանձնաժողովը հրավերի ոչ գնային պահանջները բավարարող գնահատված մասնակից «Մելիորացիա» ՓԲԸ-ին հրավիրել է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի է ունեցել 22.05.2020 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Բանակցությունների անցկացման վերաբերյալ համակարգի միջոցով, էլեկտրոնային եղանակով 19.05.2020թ.-ին ծանուցում է ուղարկվել մասնակից ընկերությանը:

22.05.2020թ.-ին ժամը 11:00-ին տեղի ունեցած բանակցություններին մասնակցել է «Մելիորացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ տնօրեն Ա. Մեսրոպյանը և տնօրենի օգնական Ա. Ղազարյանը:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակից ընկերության կողմից ներկայացվեց նոր գնային առաջարկ.

Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի վթարված հատվածի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում				
	Հազ. ՀՀ դրամ			
1	**ՉՓ 1** **Նախահաշվային արժեք – 854,3**			
	Ընկերություն	**Ինքնարժեք Շահույթ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գին**
1	«Մելիորացիա» ՓԲԸ	711,917	142,383	**854,3**

6. Գնահատման արդյունքում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՋԿ–ՀՄԱԾՁԲ-20/3-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար հրավերի պահանջների նկատմամբ:
2. 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից համարել «Մելիորացիա» ՓԲԸ-ին:
3. Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:
4. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:
5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Նախագահ ---------- Ա. Ալեյան

Անդամներ ---------- Ս. Նազարյան

---------- Է. Մխիթարյան

---------- Գ. Հունանյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան